Ալեքսանդր Ծատուրյան

Խոսքեր

Օ՜, հավատացե՛ք, անծայր երկնքում
Չեն փայլում ա՜յնքան բազմաթիվ աստղեր,
Որքան լըսում եմ ես հայի կյանքում
Խոսքե՜ր և խոսքե՜ր…

Ահա՛ ժողով է: Հայերն հավաքվել
Ազգային մի մեծ աղետի համար,
Խորհուրդ են անում, թե ի՞նչպես փըրկել
Հայ սովյայներին անտերունչ, թըշվառ.
Եվ սկսվում է աղետի առթիվ
Ճառե՜ր, կարեկցա՜նք, խոսո՜ւմ են, խոսո՜ւմ,
Խոսքերն են սիրո՜ւն, խոսքերն են անթի՜վ…
Իսկ խեղճ սովյայներն հա՜ց են աղերսում…

Գործիչ ենք թաղում: Դամբանի առաջ
Խոնված է երկսեռ բազմաթիվ ամբոխ.
Լըսում ես չորս կողմդ կարեկցանք, հառաչ.
«Ա՜հ. ի՛նչ վաղ մեռավ, ափսո՜ս, հայ գործող»…
Եվ սկսվում են հայ գործչի մասին
Դամբանականնե՜ր, թե ի՜նչ է արել.

Բայց նայե՛ք խեղճի մաշված երեսին,
Այնտեղ կրկարդաք. «Քաղցի՞ց եմ մեռել…»

Շրքեղ խնջույք է: Շամպայնն ու գինին
Թափվում է առատ, հեղեղի նման.
Սեղանավորներ լի թասեր ձեռին
Գոռում են «Կեցցե՛ հայն ու Հայաստան»:
Ճառեր են ասում՝ կատարը տաք-տաք,
Էն էլ ի՞նչ ճառեր, ի՞նչ ուխտ ու խոստում
Ազգին օգնելու… Բայց մի՛ հավատաք
Վաղն այդ բոլորը կրցնդի օդում…

Մի այլ տեսարան: Մայրաքաղաքում
Հավաքված մի խումբ հայ ուսանողներ
Ճառում են՝ ծրխով լրցված սենյակում,
Քարոզում իդեա՞լ, վե՞հ սկզբունքներ…
Անցնում են տարիք… պատկերը նախկին
Տեսնում ես փոխվեց… Կյանքի բազարում
Նույն ուսանողներն ա՛յլ շապիկ հագին,
Սուրբ իդեալներն են փողով վաճառում…

Օ՛, հավատացե՛ք, անծայր երկնքում
Չեն փայլում ա՞յնքան բազմաթիվ աստղեր,
Որքան լրսում եմ ես հայի կյանքում
Խոսքե՞ր հա՛ խոսքե՞ր…